Ինչպես են հետևում Հիսուսին

# ԿԱԲՈ ՎԵՐԴԵՈՒՄ

ԾԱՆՈԹԱՑԵՔ ՌԱԻՍԱՅԻ ՀԵ՛Տ





## Ռաիսայի մասին

**ՏԱՐԻՔԸ.** 11

**ՈՐՏԵՂԻՑ Է.** Սանտյագո կղզի, Կաբո Վերդե

**ԼԵԶՈՒ.** պորտուգալերեն

**ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ԵՐԱԶԱՆՔՆԵՐ.** ամուսնանալ տաճարում և ունենալ սեփական ընտանիքը:

**ԸՆՏԱՆԻՔԸ.** Ռաիսան, մայրը, հայրը և երկու ավագ քույրերը

## Ինչպես է Ռաիսան հետևում Հիսուսին



Երբ Ռաիսան հինգ տարեկան էր, նրա ընտանիքը փնտրտուքների մեջ էր, թե որ եկեղեցին գնալ: Առաջին անգամ, երբ նրանք գնացին Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի, զգացին, որ պատկանում են Եկեղեցուն: Ռաիսային դուր եկավ Երեխաների միությունը: Նրա ընտանիքը մկրտվեց: Ռաիսան սիրում էր նաև ամեն շաբաթ տնային երեկո անցկացնել:

Երբ Ռաիսան վեց տարեկան էր, նա և իր ընտանիքը կնքվեցին Ռեսիֆեի (Բրազիլիա) տաճարում:

Վերջերս Ռաիսան գնաց Պրայայի (Կաբո Վերդե) տաճար՝ բաց դռների օրը: «Ես կարևոր բաներ արեցի՝ տաճար գնալուն, պատրաստվելու համար, օրինակ՝ աղոթել, եկեղեցի գնալ, ուսումնասիրել սուրբ գրությունները և սովորել ավետարանը», - ասում է նա:

Տաճարի նվիրագործումից հետո նա կարողացավ մկրտություններ անել իր նախնիների համար, որոնք մահացել էին՝ առանց ավետարանի մասին իմանալու: «Տաճարը գեղեցիկ է», - ասում է նա:

ՆԿԱՐՆԵՐԸ՝ ՌԱՍԿԻՆ ԴՈՒՐԱՆ ՄԵԼՈՒՆ

### Դուք նույնպես կարող եք հետևել Հիսուսին:

Հիսուսին հետևելու բազմաթիվ ուղիներ կան: Ինչպե՞ս եք դուք հետևում Նրան: Գրե՛ք և պատմե՛ք մեզ:

## Ինչ է սիրում Ռաիսան



**ՎԱՅՐԸ.** Եկեղեցու շենքը

**ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ.** 1 Նեփի 3.7:



**ՄԻՐԳԸ ԿԱՄ ԲԱՆՋԱՐԵՂԵՆԸ.** խաղող

**ԳՈՒՅՆԸ.** մանուշակագույն





**ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆ.** մաթեմատիկա